ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարություն

Email: eiti@gov.am
Website: www.eiti.am

Իրական շահառուների (սեփականատերերի) բացահայտում. Օրենսդրական նոր փոփոխությունների ուղեցույց ընդերքօգտագործող ընկերությունների համար

Հունիս, 2021թ.

Նկարները՝ Unsplash

Նոր օրենսդրական փաթեթը

Հայաստանում ընդլայնվում է իրական շահառուների բացահայտման պարտավորություն ունեցող կազմակերպությունների շրջանակը

2021թ. հունիսի 3-ին Ազգային ժողովը ընդունեց հետևյալ օրենքների փաթեթը.

- ✓ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-246-Ն,
- ✓ «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-247-Ն,
- ✓ «Էներգետիկայի մասին օրենքում» փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-248-Ն,
- ✓ «Գնումների մասին օրենքում» փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-249-Ն,
- ✓ «ՀՀ քրեական օրենսգիրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-250-Ն,
- ✓ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-251-Ն,
- ✓ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-252-Ն,
- ✓ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-253-Ն,
- ✓ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-254-Ն,
- ✓ «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-255-Ն,
- ✓ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-256-Ն,
- ✓ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-257-Ն,
- ✓ «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-258-Ն ,
- ✓ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-259-Ն

«Իրական սեփականատեր» եզրույթը փոխարինվում է «իրական շահառու» եզրույթով

Միասնականացվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված **«իրական շահառու»** և ԱՃԹՆ-ի շրջանակում ներդրված և 2020 թվականից կիրառվող՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում սահմանված **«իրական սեփականատեր»** հասկացությունները՝ առաջարկելով բոլոր դեպքերում կիրառել **«իրական շահառու» (ԻՇ)** հասկացությունը՝ միասնական չափանիշներով:

Իրական շահառուի սահմանումը

Իրական շահառու է համարվում իրավաբանական անձի՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով իրական շահառու հանդիսացող անձը:

Ընդերքօգտագործման ոլորտում պահպանվել են իրական շահառուների բացահայտման՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված **չափանիշներից խիստ չափանիշներ**:

Ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունները

Օրենքներն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Արդարադատության նախարարը կսահմանի՝

- ✓ Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը,

- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին համապատասխանող կարգավորվող շուկաների ցանկը:

Ո՞վ է ընդերքօգտագործողը այս ուղեցույցի համատեքստում

Սույն ուղեցույցի համատեքստում «**ընդերքօգտագործող**» է համարվում այն իրավաբանական անձը, որը.

- ✓ ունի մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն,
- ✓ ունի մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն,
- ✓ լիազոր մարմին է ներկայացրել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալու համար դիմում
- ✓ լիազոր մարմին է ներկայացրել մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստանալու համար դիմում

Առավել մանրամասն՝ Ընդերքի օրենսգրքում

Նոր պահանջները ընդերքօգտագործողների համար ուժի մեջ են մտնում 2021թ. սեպտեմբերի 1-ից:

Մինչև սույն օրենքների փաթեթի ուժի մեջ մտնելն իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած կազմակերպությունների, այդ թվում, ընդերքօգտագործողների վրա նոր կարգավորումները տարածվում են 2021 թվականի սեպտեմբերի 1-ից: Ընդերքօգտագործող կազմակերպությունները պարտավոր են իրական շահառուների վերաբերյալ օրենքով նախատեսված հայտարարագիրը ներկայացնել մինչև 2022 թվականի փետրվարի 20-ը:

Ի՞նչ է սա նշանակում

2021 թվականի սեպտեմբերի 1-ից հետո, եթե կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ կան փոփոխություններ, ապա կազմակերպությունը փոփոխված տվյալներով հայտարարագիրը ներկայացնելու է՝ **առաջնորդվելով նոր կարգով**:

Եթե կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տվյալներում փոփոխություններ չկան, ապա նոր կարգով հայտարարագիրը կներկայացվի **մինչև 2022թ. փետրվարի 20-ը**՝ ամենամյա հայտարարագիրը ներկայացնելու ժամանակ:

Ե՞րբ են ուժի մեջ մտնում փոփոխությունները այլ իրավաբանական անձանց համար

- **Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող և լիցենզիա ստանալու համար դիմող կազմակերպությունների համար** օրենքներով նախատեսված պարտականությունները ծագում են **2021 թվականի սեպտեմբերի 1-ից**:

- **Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող**, ինչպես նաև տեսալսողական **մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց** համար սույն օրենքով նախատեսված պարտականությունները ծագում են **2021 թվականի սեպտեմբերի 1-ից**:

- **Մյուս բոլոր իրավաբանական անձանց համար**, բացառությամբ միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար՝ **2022 թվականի հունվարի 1-ից**:

- **Միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և ոչ առևտրային կազմակերպությունների** համար՝ **2023 թվականի հունվարի 1-ից**:

- Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց համար օրենքներով նախատեսված են բացառություններ:

Հիմնական փոփոխությունները ընդերքօգտագործման ոլորտում

Ընդերքօգտագործման ոլորտում պահպանվել են իրական շահառուների բացահայտման՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված չափանիշներից խիստ չափանիշներ՝ նպատակ ունենալով բավարարել ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները և պահպանելով ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի որոշումները:

Այդ ոլորտին յուրահատուկ կարգավորումները սահմանվել են Ընդերքի օրենսգրքում:

Այնուամենայնիվ, նոր օրենքների փաթեթով ընդերքօգտագործման ոլորտում ևս կատարվել են որոշակի փոփոխություններ:

Կատարված փոփոխությունների նպատակներն են.

- ✓ վերացնել արձանագրված բացերը,
- ✓ համապատասխանեցնել կարգավորումները միջազգային պահանջներին,
- ✓ ապահովել տվյալների արժանահավատության ապահովման մեխանիզմներ,
- ✓ բարելավել հայտարարագրի ներկայացման բիզնես գործընթացը:

Ստացած օգուտը՝ որպես իրական շահառու դառնալու հիմք

2021թ. սեպտեմբերի 1-ից անձը համարվում է իրական շահառու, եթե իրավաբանական անձից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացված **շահույթի** առնվազն 15 տոկոսի չափով օգուտ:

Նախորդ կարգում 15 տոկոսի չափով օգուտը հաշվարկվում էր ստացված **հասույթից:**

Ցուցակված ընկերությունների մասով կարգավորումները

Ցուցակված բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունները կամ այնպիսի առևտրային կազմակերպությունները, որոնց ամբողջությամբ վերահսկում է ցուցակված բաժնետոմսերով մեկ այլ առևտրային կազմակերպություն, պարտավոր են ներկայացնել ԻՇ հայտարարագիր, որտեղ կտրամադրեն տեղեկատվություն իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման, ցուցակված բաժնետոմսերով իրավաբանական անձի պետական գրանցման տվյալների (ներառյալ՝ դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը), ինչպես նաև այդպիսի իրավաբանական անձի մասնակցության ծավալների վերաբերյալ:

Սակայն, եթե իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են այնպիսի կարգավորվող շուկայում, որտեղ իրական շահառուների **բացահայտման չափանիշները համարժեք չեն** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին, ապա այդ կազմակերպությունը կներկայացնի **ամբողջական հայտարարագիր**:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին համապատասխանող կարգավորվող շուկաների ցանկը սահմանում է ՀՀ արդարադատության նախարարը:

Քննիչները կհամարվեն ՔԱՈՒԱ

Նախկին կարգավորմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց ցանկում կար բացառություն քննիչների մասով: Այս **բացառությունը հանվել է և քննիչները նույնպես պետք է դիտարկվեն որպես ՔԱՈՒԱ:**

Այսպես.

Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք, Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխվարչապետների, նախարարների խորհրդականների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի, վարչապետի գլխավոր խորհրդականի, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով այդպիսի անձանց ընտանիքի անդամ համարվող անձիք համարվում են իրավաբանական անձի իրական շահառու՝ **անկախ ունեցած ձայների և ստացված օգուտների մեծությունից**:

Համաձայն փոփոխված կարգավորումների՝ կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումը իրականացնող պաշտոնատար անձը համարվում է իրական շահառու **միայն այն դեպքերում**, երբ այլ հիմքերով (Ընդերքի օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետի «ա»-ից «դ» ենթակետեր) **իրական շահառու (ֆիզիկական անձ) առկա չէ**:

Նախկին կարգով բոլոր դեպքերում իրական սեփականատեր էին համարվում նաև կազմակերպության կառավարման միանձնյա և կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողովի, խորհրդի և գործադիր մարմնի) անդամ ֆիզիկական անձինք:

Հայտարարագրի հետ չեն ներկայացվի Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը:

Սակայն, կազմակերպությունը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը:

Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի՝ ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի սկսած այն պահից, երբ անձը, ում դրանք առնչվում են, դադարում է լինել իրավաբանական անձի իրական շահառու:

Իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալության և պետական մարմինների պահանջով կազմակերպությունը հնգօրյա ժամկետում փաստաթղթերը պետք է ներկայացնի համապատասխան մարմին

Միաժամանակ, եթե կազմակերպության իրական շահառուն օտարերկրյա ֆիզիկական անձ է, հայտարարագրի հետ պետք է ներկայացվեն տվյալ անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի վավերացված և հայերեն թարգմանված պատճենը:

ԻՇ հայտարարագիր ներկայացնելու ժամկետները

Հայտարարագրերի և ԻՇ փոփոխված տվյալների և քաղվածքների ներկայացման ժամկետները չեն փոխվել:

✓ Իրական շահառուների վերաբերյալ տվյալների փոփոխման դեպքում դրանք ենթակա են հայտարարագրման իրավաբանական անձին **հայտնի դառնալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 40 օրվա ընթացքում:**

✓ **Մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը** իրավաբանական անձը պարտավոր է գործակալություն ներկայացնել.

- հաստատում, որ իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ.
- փոփոխված տեղեկություններ (փոփոխված հայտարարագիր) իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ:

Յուրաքանչյուր անգամ հայտարարագիր ներկայացնելուց հետո կազմակերպությունը **14 օրվա ընթացքում** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացնում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող **քաղվածք**:

Նոր կարգավորումներով ավելացել են պատասխանատվության միջոցներ, որոնք վերաբերվում են ոչ միայն ընդերքօգտագործողներին:

Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք

1. ԻԾ վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելը առաջացնում է նախազգուշացում:

2. 1-ին կետով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի կիրառումից հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

3. ԻԾ վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

Նոր կարգավորումներով ավելացել են պատասխանատվության միջոցներ, որոնք վերաբերվում են ոչ միայն ընդերքօգտագործողներին:

Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք

4. ԻԾ վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

5. ԻԾ վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից իրական շահառուների բացահայտման նպատակով պատշաճ ուսումնասիրություն չիրականացնելը կամ իրականացված պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները և փաստաթղթերն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չպահպանելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

   1-5 կետերով թվարկված արարքները կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե մինչև վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը նա վերացրել է իր թույլ տված խախտումը և իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին է ներկայացրել ապացույցներ այդ մասին:

Նոր կարգավորումներով ավելացել են պատասխանատվության միջոցներ, որոնք վերաբերվում են ոչ միայն ընդերք-օգտագործողներին:

Քրեական օրենսգիրք

- ԻՇ վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տեղեկություններ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

- Իրավաբանական անձի մասնակցի կամ իրական շահառուի կողմից ԻՇ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող կազմակերպությանը իրական շահառուների վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելը կամ կազմակերպության կողմից ստացված հարցմանը օրենքով նախատեսված ժամկետում աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Նոր կարգավորումներով ավելացել են պատասխանատվության միջոցներ, որոնք վերաբերվում են ոչ միայն ընդերք-օգտագործողներին:

ԻԾ հայտարարագիրը կամ ԻԾ-ների վերաբերյալ փոփոխված տեղեկությունները երեք տարի անընդմեջ չկատարելու, ինչպես նաև կանոններն այլ կերպ բազմակի կամ կոպիտ խախտելու դեպքում գործակալությունը կարող է դիմել դատարան՝ իրավաբանական անձին լուծարելու պահանջով:

Միայն ընդերքօգտագործողներին վերաբերվող հատուկ պատասխանատվության միջոցները

Միաժամանակ, **պահպանվում են** միայն ընդերքօգտագործողների համար սահմանված հատուկ պատասխանատվության միջոցները: Այսպես.

Եթե ընդերքօգտագործող կազմակերպությունը օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել ԻԾ վերաբերյալ տեղեկություններ կամ ներկայացրել է իրական շահառուների վերաբերյալ կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ և չի վերացրել թույլ տված խախտումը դրա վերաբերյալ կայացված դատական ակտի ուժի մեջ մտնելուց կամ վարչական ակտի անբողոքարկելի դառնալուց հետո 30 օրյա ժամկետում կամ լիազոր մարմնին չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք, Գործակալությունը դրա մասին հայտնում է ՏԿԵՆ-ին:

ՀՀ Ընդերքի օրենսգրքով սահմանվում է պատժամիջոցների հետևյալ տեսակները՝

- գրավոր զգուշացում, այնուհետև
- ընդերքօգտագործման իրավունքի կասեցում, այնուհետև
- ընդերքօգտագործման դադարեցում:

Հայտարարագրերի առցանց ներկայացումը և տվյալների հանրային հասանելիությունը



THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP
Copyright © 2020 VXsoft LLC. Բոլոր իրավունքները պաշտպանված են
egov.am

ԻՇ հայտարարագրերը ներկայացվում են առցանց՝ Իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգով:

Ընդերքօգտագործող կազմակերպությունների իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, բացառությամբ հրապարակային չհամարվող տեղեկությունների, հասանելի են Իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալության պաշտոնական կայքում առանց պետական տուրք վճարելու և բաց տվյալների «**html**», «**json**» ձևաչափերով ու **գծապատկերով**: